Արձանագրություն N 5
ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/36» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «06» «Օգոստոս» 2018թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

անձնաժողովի նախագահ	Մ. Մխիթարյան
Հանձնաժողովի անդամներ	Ա. Գրիգորյան
	Մ. Համբարձումյան
Հանձնաժողովի քարտուղար	Լ. Սարգսյան

1. Հայաստանի Հանրապետության ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Մ. Մխիթարյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ և ստացվել եզրակացություն, ըստ որի ընտրված մասնակիցները չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Մ. Մխիթարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել Մասնակցին ներկայացնել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: «ՍԵՆԴԱ», «Սմարթլայն», «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում է «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/36» ծածկագրով գնման ընթացակարգի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Մ. Մխիթարյան)

Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/36» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել՝ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին՝ 338 580 ՀՀ դրամ, «Սմարթլայն» ՍՊԸ-ին՝ 108 000 ՀՀ դրամ, «Ֆոտոն» ՍՊԸ-ին՝ 220 230 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/36» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր (07.08.18թ-11.08.2018թ. ներառյալ):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Մխիթարյան

Անդամներ՝ ---------- Ա. Գրիգորյան

---------- Մ. Համբարձումյան

Քարտուղար՝ ---------- Լ. Սարգսյան